

Manoogian Simone Research Fund (MSRF)

Թեմա. Տնտեսական շահութաբերության ներքին դրույքի (ՏՇՆԴ, EIRR) հաշվարկման մեթոդաբանություն և առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերի համար

1. Հիմնախնդրի նկարագրությունն ու դրա արդիականությունը

Առողջապահության ոլորտում տնտեսական շահութաբերության ներքին դրույքն օգտագործվելու է որպես ելակետային ցուցանիշ հանրային ներդրումային ծրագրերի, ինչպես նաև առողջապահության ոլորտում ներդրումների արդյունավետությունը գնահատելու համար:

2. Հետազոտության նպատակը և դրա հնարավոր ազդեցությունը համապատասխան քաղաքականության մշակման վրա

Հետազոտության շրջանակներում անհրաժեշտ է մշակել առողջապահության ոլորտում տնտեսական շահութաբերության ներքին դրույքի գնահատում՝ ներդնելով Հայաստանի Հանրապետությունում կիրառելի մեթոդաբանություն:

Ակնկալվող արդյունքը

Առաջադրանք 1. Միջազգային փորձի ուսումնասիրություն

Համադրելի երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ է վեր հանել առողջապահության ոլորտում ներդրումների տնտեսական շահութաբերության ներքին դրույքի գնահատման կիրառվող մեթոդաբանությունները:

Առաջադրանք 2. Կիրառելիությունը Հայաստանի Հանրապետության համար

Միջազգային փորձի և տվյալների վերլուծության արդյունքներով անհրաժեշտ է առաջարկել Հայաստանի Հանրապետությունում առողջապահության ոլորտում ներդրումների տնտեսական շահութաբերության ներքին դրույքի հաշվարկման մեթոդաբանություն:

3. Հետազոտության մեջ ուսումնասիրվելիք կոնկրետ խնդիրներն ու հարցադրումները

Manoogian Simone Research Fund (MSRF)

- առողջապահական ենթակառուցվածքների շինարարության ոլորտում հանրային ներդրումային նախագծերի գնահատման և EIRR-ի կիրառման միջազգային փորձի ուսումնասիրություն,
- (EIRR) հաշվարկման համար անհրաժեշտ փոփոխականների ընտրություն և մոդել,
- անհայտ փոփոխականների գնահատում և դրանց կիրառում հանրային ներդրումային ծրագրերի օրինակով:

4. Հետազոտությունից ակնկալվող արդյունքը

- առողջապահական ենթակառուցվածքների շինարարության ոլորտում EIRR-ի հաշվարկման համար բացակայող փոփոխականների նույնականացում և գնահատում,
- առաջարկություններ վերոնշյալ ոլորտում EIRR-ի հաշվարկման համար: